

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ «ԲԱՅՐՈՆԻ ԱՅՑԸ ՄԽԻԹԱՐՆԱՆՆԵՐԻՆ Ս. ՂԱԶԱՐ ԿՂԶՈՒՄ» ԵԿԱՐԸ

Անցյալ գարի 90-ական թթ. կեսերին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած հայկական շարժերի ծանր տպավորության տակ Հովհաննես Այվազովսկին (1817—1900) նկարում է այդ ահավոր ցեղասպանությանը նվիրած մի շարք պատկերներ («Հայկական շարժերը Տրապիզոնում 1895 թ.», «Հայերին լցնում են նավերը», «Կենդանի հայերին թուրքերը թափում են Մարմարա ծովը» և ուրիշները) և դրանց թվում՝ «Ջորջ Բայրոնի այցը Մխիթարյաններին Ս. Ղազար կղզում» պատկերը (1899 թ., չափը՝ 133×219):

Պատահական չէր այդ նկարի ստեղծումը: Բայրոնի պոեզիայի հեղափոխական ոտմանտիղը, նրա բոցաշունչ ազատագրական ձրդտումները, նրա պայքարը կործանարար ուժերի, անարդարության, բռնակալությունների դեմ, նրա լավատեսությունն ու ժողովրդասիրությունը համահունչ էին XIX դարի երկրորդ կեսի հայ գրականության և արվեստի առաջավոր ներկայացուցիչների ձգտումներին: Հայ ժողովուրդը և նրա մշակույթի շատ գործիչներ միշտ էլ բարձր են գնահատել անգլիացի մեծ բանաստեղծին:

Սովանկարիչ Հովհաննես Այվազովսկին նույնպես իր հայրենասիրական ձգտումներն արտահայտել է Բայրոնի կերպարում: 1899 թ. ստեղծելով այդ մեծակտավ ու բազմաֆիգուր սյուժետային պատկերը, նա 22 այլ ծովանկարների հետ նույն տարվա աշնանը ուղարկում է Բացու, ուր հասարակական ժողովարանի ամառային շենքում նոյեմբերի 6-ին բացվում է նրա անհատական ցուցահանդեսը: 82-ամյա նկարիչը ցանկություն է հայտնել անձամբ ներկա լինել իր ստեղծագործությունների ցուցահանդեսի բացմանը: Սակայն, ինչպես հաղորդում է «Մշակ» թերթը, անսպասելի հիվանդությունը նրան զամում է անկողնում:

Ժամանակին այդ ցուցահանդեսը ռուսական արվեստագիտական գրականության մեջ արձագանք չգտավ: Սովետական տարիներին հրապարակված գրականության մեջ, մասնավորապես նկարչի կազմակերպած անհատական ցու-


ցահանդեսների ցուցակում, ևս այն չի հիշատակվել: Ավելին, Աղավաղվել է նույնիսկ նկարի անունը: 1962 թ. Մոսկվայում հրատարակված Սովետական Միությունում գտնվող Այվազովսկու ստեղծագործությունների ընդհանուր ցուցակում այդ պատկերը անվանվել է «Բայրոնի այցը Հունաստան («Приезд Байрона в Грецию»), ճիշտ այնպես, ինչպես նկարչի նկարած «Հայ ժողովրդի մկրտությունը» (1892 թ.) վերնագրվել է աղավաղված՝ «Ժողովրդի մկրտությունը» («Крещение народа»):

Մինչդեռ «Ջորջ Բայրոնի այցը Մխիթարյաններին» պատկերը, ինչպես և Այվազովսկու մյուս ծովանկարները լայն արձագանք գտան Բարվի բազմազգ հասարակության մեջ և հայ պարբերական մամուլի էջերում: Թերթերը հաղորդում են, որ առավոտից մինչև Լրեկո ցուցասրահը լիքն է եղել այցելուների: Շատերը գնել են մի քանի տոմս պարբերաբար կամ ընտանիքներով հաճախելու համար: 1899 թ. նոյեմբերի 30-ին «Մշակը» արդեն հաղորդում է. «Այվազովսկու պատկերահանդեսը, որը բացվել է Բացվում, ունեցավ մեծ հաջողություն: Համարյա բոլոր պատկերները ծախված են: Շատերի համար ցանկալի էր ունենալ նշանավոր նկարչի ստեղծագործությունները և անկասկած, եթե ավելի մեծ թվով պատկերներ բերված լինեին, նրանք կծախվեին»:

Մախվում է և «Ջորջ Բայրոնի այցը Մխիթարյաններին» պատկերը: Ցավոք, հայտնի չէ, թե ժամանակին ո՞վ է գնել և այնուհետև ո՞ւր է տարվել այդ պատկերը: Նրա տեղը երկար ժամանակ մնացել է անհայտ: Մնում էր ենթադրել, որ հեղափոխությունից առաջ դա տարվել է արտասահման:

Հետագայում մի անսպասելի դեպք հայտնի է դարձնում այդ պատկերի գոյությունը: Ծուպատերազմյան շրջանում մի ռուս գեներալ Թրիխտով այցելում է Վրաց կերպարվեստի թանգարան և հայտնում, որ ինքը իր հետ

¹ Н. Барсамов. И. К. Айвазовский. М., 1962, с. 203, 205.



բերել է Ալվադովսկու մի մեծակտավ նկար, որն իր փոքրիկ սենյակում կախել հնարավոր չէ, ուստի խնդրում է ընդունել այն թանգարանի համար և դրա փոխարեն տալ իրեն որևէ գեղարվեստական իր կամ մի փոքր նկար: Նրան տրվում է սեղանի ժամացույցի XVIII դարի ֆրանսիական քանդակագործ պատյան, որը հարդելի գեներալը գոհունակությամբ ընդունում է՝ թանգարանին թողնելով իր բերած կտավը, որն այսօր ժամանակավորապես ցուցադրվում է Հայաստանի պետական պատկերասրահի հայկական կերպարվեստի բաժնում՝ Հովհ. Ալվադովսկու ստեղծագործություններին հատկացված երկու լայն ու լուսավոր սրահներից մեկում:

Նկարը պատկերում է հանդիսավոր ընդունելության տեսարան: Ռեալիստորեն և դիմանկարային ճշգրտությամբ նկարիչը պատկերել է ծաղկազարդ գնդորով Ս. Ղազար կղզի եկած և արդեն ափ իջած անգլիացի երիտասարդ բանաստեղծին ու նրան սիրալիք դիմավորող Մխիթարյաններին: Առաջին պլանում են միաբանության ավագ հայրերը՝ Հարություն Ավգերյանը, Սուքիաս Սոմալյանը, վանահայր Նիկողոսը և միաբանության մյուս հոգևոր ու գիտնական անձինք, իսկ նրանց հետևի շարքում՝ ուսումնարանի պատանի սաները: Հետևում երկվում են Վենետիկի ծովափնյա շենքերի ուրվագծերը, նավահանգստային առագաստանավեր և գոնդոլներ, որոնց մեջ եղած մարդիկ հետաքրքրությամբ դիտում և ողջունում են մեծ բանաստեղծին: Մովածոցի խաղաղ, հայելապատ մակերեսի վրա արտացոլված վաղորդյան արևի պայծառ ճառագայթները, սպիտակ ու թեթև ամպերով պատած բարձր երկնակամարի լուսառատությունը և մարդկանց դեմքերի ջերմագին արտահայտություններն այս պատկերին տալիս են տոնական կենսուրախ տրամադրություն:

Բայրոնի թեման նորություն չէր հայ նկարչության մեջ: Դեռևս 1882 թ. Կ. Պոլսում անգլիական հյուպատոսի կազմակերպած գեղարվեստական պատկերահանդեսում ցուցադրվել է արևմտահայ նկարիչ Մկրտիչ Ճիվանյանի «Լորդ Բայրոնի երազը» նկարը: Ժամանակակից պոլսահայ մամուլը հաղորդում է, որ այդ պատկերի մեջ «...անվանի քերթողը կերևի երազում. և իր շուրջը կնշմարին շքեղ ընտելություն, արևելյան քարավաններ և Հայաստանի ավերակները»: Այդ պատկերը մեզ չի հասել:

Հովհ. Ալվազովսկին, ամենայն հավանականությամբ, տեսել է այդ նկարը 1888 թ. Կ. Պոլսում եղած ժամանակ, երբ տեղացի հայ

նկարիչները նրան ցույց էին տալիս իրենց ստեղծագործությունները: Հանճարեղ ծովանկարիչը, 1840-ական թթ. տեսնելով հարազատ ժողովրդի նկատմամբ թուրք բարբարոսների մասսայական վայրագություններն ու հայկական, ցեղասպանությունը, մտահղանում է ծովային, տեսարանով այս սյուժետային պատկերը, որտեղ աչքառու ցույց է տալիս, թե ինչպիսի համաշխարհային մեծություններ, դրանց թվում և Բայրոնի պես մեծությունը, բարձր են գնահատել հայ ժողովրդին, նրա բազմադարյան հարուստ մշակույթն ու ազնիվ, ստեղծագործ աշխատանքը, որոնք այժմ թուրքերն անխնա ուղնչացնում են:

Այդ նկատառումով նկարիչը Բայրոնի ֆիզոնոր տեղագրել է դիտողին մոտիկ, նրա աչքի առաջ՝ մեծ կտավի աջ կողմի ներքևի շրջանակի մոտ, գեոմիտի փոված կարմիր ուղեգործվրա արագ քայլերով հյուրընկալներին մտնելիս: Բանաստեղծն այստեղ երևում է գեղեցիկ դիմագծերով, ինչպես իրականում իրոք եղել է, աշխույժ ու կայտառ շարժման մեջ: Չեղբերը երկու կողմ լայն բացած (մեկում՝ դիտարկը), նա կարծես ուզում է զրկարաց փարվել իրեն ընդառաջ եկող հայ անձանց՝ հոգևոր ու գիտնական այրերին, որոնց մոտ նա սովորելու էր հայերեն լեզու, կատարելու թարգմանություններ, կազմելու բառարաններ: Այդ պատկերի մեջ ժամանակակիցները տեսնում էին այն մեծ հումանիտիստ, որը հետագայում իր կյանքը գոհարներից հույն ժողովրդի ազատագրության գործին: Բնորոշ է Բայրոնի հետ գրույցներունեցած, միաբանության վանահայր Նիկողոսի այն խոսքը, որ նա ասել է բանաստեղծի անգլիական կենսագիրներից մեկին հիշողություններ պատմելիս. «Ե՛մ լորդ Բայրոնը մեռավ Հունաստանի համար, բայց նա մեռավ նաև Հայաստանի համար»: Ահա այս միտքն է մղում տվել ծովանկարչին ստեղծելու Բայրոնի թեմայով վերահիշյալ պատկերը: Նկարիչն այդ մասին լսել է դեռ 1840—1843 թթ. Ս. Ղազար կղզում բազմիցս եղած ժամանակ, երբ նույն տարիներին այստեղ ապրում և աշխատում էր նաև նրա ավագ եղբայր Գարրիել Ալվադյանը (Ալվազովսկին)՝ հետագայում հայ մշակույթի և հոգևոր խոշոր գործիչը, որի երիտասարդ տարիների դիմանկարը, շնայած ժամանակի տարբերության, նկարիչը տեղագրել է սույն կոմպոզիցիայի աջ անկյունում՝ Բայրոնին դիմավորող Մխիթարյանների շարքում (այժից երկրորդը):

Մ. Ա. ԱՍԻՐՅԱՆԵ